Է. ՏԱՐԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 24 ՄԱՐՏ 1904 ԹԻՒ 604

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ
Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
„Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ
)( 20 ՍԱՆԹԻՄ )(
Պուլկարիոյ համար ձեռքէ
)( 15 ՍԱՆԹԻՄ )(

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ» Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներողութիւն եմ խնդրում բոլոր այն պարոններից, որոնց նամակներին չեմ կարողացել պատասխանել երկարատեւ բացակայութեան պատճառով։

ՎԱՐԴՕ

Մարտ 23 Վարնա

## ԳԱՐՈՒՆ Է ՆՈՐ

Գարուն է նոր, Տեսէ՛ք ի՛նչպէս պսպղի
Հորիզոն, Լեռներ սարեր կեանք բուրեն,
Ու հոն հեռուն՝ լայն դաշտերը դեռ յղի՝
Կը սարսռան արեւուն ջերմ համբոյրէն։

Տեսէ՛ք ի՛նչպէս թռչուններն հրայրքով
Կը նորոգեն իրենց բոյնը հարազատ.
Պիտ՝ բընակին անոնք խաղաղ ի-բար՝ քով,
Բարձունքներու վրայ, օդին մէջ ազատ,

Իսկ մենք մոռցանք մեր հէգ բոյնը հընաւանդ,
Բանակալի հարուածներէն քարուքանդ,
Եւ ապրեցան հոն ժանտ իժեր անհամար,

Դէ, փութա՛նք հոն, դէպ մեր բոյնը գեղանի,
Ով հայ տըղաք, ազատութեան սիրահար,
Ու նորոգուի չքեղապանծ Թող Անի՛։

Վէսա

## ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

Ամեն մի ժողովրդի մէջ կան հոգեկան հիւանդներ, խղճուկ արարածներ, որոնք կիսախելագարութեան հասած ղառանցում են հասարակական կեանքի պայմանները և ուղղութիւնը փոխել. սակայն այդպիսիները գիտակից, հոգեպէս առողջ և հասարակական նպատակին որոշ կերպով դիմող ժողովուրդների մէջ աննկատելի են մնում ու իրենց հիւանդ ցնորքների և ղառանցանքների հետ միասին ոչնչանում.

Դժբախտաբար այդպէս չէ հայերիս մէջ. մեզանում ամեն կիսախելագար, ամեն մի հոգեկան հիւանդ կարող է աղմուկ բարձրացնել, կարող է բարենորոգիչի, պատգամախօսի կերպարանքով ասպարէզ նետուել և հասարակութեան հրամցնել իր հիւանդ կամ անմշակ ուղեղից դուրս նետուած յիմարութիւնները, որոնք իբր թէ նպատակ ունեն բարեփոխել հայ կեանքը...

Որպէսզի ասածս զրպարտութիւն չը համարուի, ես կը յիշեցնեմ ընթերցողներիս վերջերումս հրապարակ նետուած միութենական կոչը, որի նպատակն է մեր յեղափոխական կուսակցութիւններին միացնել. Խնդրեմ ասացէք, եթէ այդ մարդիկը հոգեպէս և մտաւորապէս առողջ լինէին, եթէ դրանք պարզ գռեհիկներ չը լինէին, եթէ տարրական գիտակցութիւն ունենային քաղաքական կուսակցութիւնների ստեղծուելու և կազմակերպուելու մասին, եթէ ընդունակ լինէին իրենց աչքի առջեւ բերելու այդ տեսակ և աւելի ձեռնհաս մարդկանց կողմից եղած փորձերի անյաջողութիւնը. կարո՞ղ էին մի այդպիսի երեխայական քայլ անել, ոչ և ոչ. Եսը, հոգեկան հիւանդութիւնը դրանց զրկել է ամենապարզ խնդիրը դատելու ընդունակութիւնից ու դարձրել մի տեսակ խելագարներ, որոնց տեղը կարող է լինել միայն գժանոցը.

Այդ հոգեկան հիւանդների Վարնայի Յանձնախումբը. թէ պատգամաւորական ժողով! լաւ չը գիտեմ այդ, դիմել են յեղափոխական կուսակցութիւններին, ի միջի որոց և Հայ. յեղ. Դաշնակցութեան, իրենց հիւանդ բաղձանքների առաջարկովը.

Մենք չը գիտենք թէ մեր յեղափոխական խմբակները ինչ դիրք պէտք է բռնեն դէպի այդ եղկելի մարդիկը, և չենք էլ ուզում գիտենալ. բայց հաստատ գիտենք որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մարմարի պաղութեամբ և սֆինքսի անտարբերութեամբ պէտք է վերաբերուի.

Այս ասելուց յետոյ, աւելորդ չենք համարում հաղորդել մեր հիւանդներին, որ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը բացի պաղարիւն անտարբերութիւնից դէպի այդտեսակի հիւանդագին կոչերը, նաեւ ուժ ունի ամենաեռանդուն կերպով զսպելու այն հասարակական հիւանդներին, որոնց խենթութիւնը չափից անցնելով կարող է վնասակար դառնալ մեր ազատագրութեան գործին նոր խոչնդոտներ, նոր աղտոտ պայքարներ ստեղծելով.

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը իբրեւ յեղափոխական կուսակցութիւն այսօր թէ նիւթապէս, թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս աւելի ուժեղ է քան երբ եւիցէ, ուրեմն և աւելի խիստ կը լինի. որի հանդէպ էլ լինի, եթէ այդպէս են պահանջում մեր ազատագրութեան գործի շահերը. Մենք հաստատ գիտենք որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ձեռք կը մեկնի միայն ազնիւ, անկեղծ և անձնազոհ անհատներին ու խմբակներին, այն էլ աւելի կռուի վայրում, թշնամու հանդէպ. ուստի մեր հիւանդ միութիւնճիներին խորհուրդ կը տանք իրենց կոչերը և աչքերը դէպի ուրիշ. իրենց խելքին, սրտին յարմար կողմեր ուղղել.

ՎԱՐԴՕ

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Յեղափոխական մարմին մը երբ լիովին կըմբռնէ ազգին շահերը, չի ուզեր ոչ մի գնով դաւաճանել իրեն վրայ առած ազատագրութեան մեծ գործին ու յեղափոխութեան գաղափարին, ան չի ենթարկուի ամբոխային գռեհիկ տրամաբանութեան և անվերապահ կերպով կուտայ իր կտրուկ որոշումը իր բռնելիք այս կամ այն ընթացքին մասին.

Այսպիսի ցանկալի անվերապահութեամբ վարուած է վերջերս Հ. Յ. Դաշնակցութիւնը միութեան կամ համերաշխ գործունէութեան վերաբերմամբ ուրիշ յեղափոխական խմբակներու հետ.

Ստոյգ աղբիւրներէ կիմանանք թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը որոշած է ո և է ձեւի տակ բանակցութեան մէջ չը մտնել մեր ինքզինքնին յեղափոխական մարմիններ հռչակողներու, բայց երբէք յեղափոխութեամբ չը զբաղողներու հետ, այլեւս համոզուած ըլլալով թէ այդ կարգի բանակցութիւնները միայն վնաս կը բերեն մեր ազատագրութեան գործին, ու ամբոխին թելադրանք կը հանդիսանան որ միշտ կեղծ յեղափոխականը չփոթէ իրական յեղափոխականներու հետ և այդպիսով սխալ առաջնորդուի մեր ազատագրութեան գործին վերաբերմամբ. Բացի այս առաջին որոշումէն, Հայ Յեղ. Դաշնակցութիւնը երկրորդ որոշումով մը իր գործիչներուն ու մարմիններուն կարտօնէ ուրիշ դրօշակի տակ գտնուող հայ անկեղծ յեղափոխական անհատներու և խմբակներու հետ, մանաւանդ երկրին մէջ, կռուին վայրը, թշնամիին դիմաց, համերաշխաբար գործեն և այդպիսով դիւրութիւն տան ամեն հայ անկեղծ ու անձնուէր յեղափոխականի իրենց պարտքը կատարելու դէպի հայրենիքը.

Այս երկրորդ որոշումը կուգայ մեղմացնել առաջին որոշումին խստութիւնը, և կը զատէ այն անկեղծ հայրենասէրները, որոնք անգիտակցաբար կամ թիւրիմացութեամբ այս ու այն չարլաթան առաջնորդին ստորին բնազդներուն գործիք դառնալով կիյնան վնասակար հոսանքի մէջ և ապարդիւն կը կորսուին թէ բարոյապէս, թէ ֆիզիքապէս միամիտ համոզումը ունենալով որ մեր ազատագրութեան գործին կը ծառա-

